ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ

ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ «ԵՐԿՐԱՊՏՈՒՅՏ»-Ը

Բանալի բառեր - *պոեզիա, համակարգ, արդիական, պատկեր, քաղաքացի, խճանկար, ռեմինսցենցիա, պոստմոդեռնիզմ:*

Ներկա ժամանակը ճշմարիտ բանաստեղծի մեջ ներծծված է այնպես, որ անկախ խառնակ իրականությունից և էլեկտրոնային ու գովազդային գնահատման-ճանաչողական մերօրյա չափանիշներից, բանաստեղծի և ընթերցողի բացահայտ սուբյեկտիվ վերաբերմունքից, միևնույն է, ստեղծվում է վերլուծական տեքստ՝ հարուստ ու ընդգրկուն ենթատեքստերով: Մյուս կողմից՝ նորագույն գերժամանակակից պոեզիան կարծես թե ընթանում է որոշակի գրական խմբակների կամ ակումբային զարգացման ճանապարհով: Այնուամենայնիվ, բանաստեղծը չի կարող հաշվի չնստել հասարակական կարծիքի ձևավորման հետ, որն առնչվում է անգամ իր սեփական պոեզիայի մասին գաղափարների, և նույն կերպ՝ իր սեփական կենսափորձի հետ:

Անշուշտ, Ներսես Աթաբեկյանի պոետական ներկայությունը 21-րդ դարի հայ գրականության ընթացքում կարևոր ու շոշափելի է, և հասունացել է պահը, որպեսզի քննադատները պարբերաբար և համակարգված անդրադառնան նրա ստեղծագործությանը:

Ներսես Աթաբեկյանի «Երկրապտույտ» ժողովածուն ընթերցողին մատուցում է նոր ու թարմ պոեզիա, որի ամենից կարևոր առանձնահատկությունն այն է, որ հեղինակը կարևորում է դասական չափականությունը և վանկային-տոնիկական կառուցումները, որոնք էլ զուգահեռում է նորարարական ու փորձարարական արդիական կառույցներին.

Եվ չորս եղանակից ես ձմեռն եմ ընտրում.
«Արգելվում են բոլոր թռիչքները, մինչև...»:
Ես այն կռունկն եմ, որ չեկավ այս գարուն
ու գալ գարուն գալու կռունկը չեմ[1]:

* *Հոդվածն ընդունված է տպագրության 28.02.2020 թ.:*

1 Աթաբեկյան Ներսես, Երկրապտույտ, Երևան, Արմավ, 2018 թ., էջ 6, 160 էջ:

Ներսես Աթաբեկյանի պոետական համակարգը գայթակղիչ և հետաքրքիր է: Որպես կանոն՝ այն խաչաձև (abab) կառուցումներով է, բանաստեղծական չափականությունը գործերում հաստատում է նոր որակ, խիստ հազվադեպ են թույլատրված ազատությունները, իսկ անթույլատրելին՝ ամենուր է: Սա արդիականության տեսանկյունից ոչ միայն հնի բացասում է, այլև նորի կառուցում, որով է՛լ ավելի է արժևորվում բանաստեղծի հանգանակը: Հակառակ դեպքում, չի կարելի միևնույն ժամանակ նայել կյանքին և անմասնակից լինել կյանքի ընթացքին: Սոսկ տիեզերքի ողբերգական իմաստը բանաստեղծությանը կտրում է հողից, դարձնում անկենդան ու թյուրընկալելի: Իսկ Ներսես Աթաբեկյանի բանաստեղծության հիմնական արժանիքը լեգիտիմությունն է, որը հաճախ հագնում է հեգնանքի դիմակ, ի հայտ բերում ընդգծված և անգամ դաժան սարկազմ:

Տոմս առ
(ավտոբուսի, օդանավի, աստղաթիռի)
արթնացիր լուսաստղից առաջ,
կոկիկ հավաքիր ճամպրուկդ
ու բոլորից վաղ հասիր կայարան
(ավտոբուսի, օդանավի, աստղաթիռի),
մեկ է, չես գնա ոչ մի տեղ,
կտեսնես ընդամենը զառամյալ
(արդեն ո՛չ տղամարդ ու կին)
մարդիկ, որ հավաքվել են քեզնից էլ վաղ
ու չեն հիշում, թե ուր պիտի գնան,
կոկիկ հագած-կապած,
ձեռներին կենսաչափական անձնագրեր (էջ 24)

Կյանքը փոխվել է, բանաստեղծությունն իր օրինաչափությունները փոխել է, դարձել կյանքին համահունչ: Պոետը հայելու նման արտացոլում է այն, ինչ կա իր շուրջը: Սա բնորոշ է բրիտանական վավերագիրներին, սակայն կյանքի հայելային անդրադարձը միշտ չէ, որ արտացոլքի ճշգրիտ կրկնությունն է: Ներսես Աթաբեկյանը մի յուրահատուկ հղացքով կարողանում է ծուռ հայելիների աշխարհ ստեղծել և իրականությունը պատկերվում է բանաստեղծի անմիջական վերաբերմունքով ու դիրքորոշմամբ: Սա բերում է խտաց-

Այսուհետ սույն գրքից մեջբերումների էջերը կնշվեն մեջբերումից հետո՝ փակագծերում:

ման, ինչի արդյունքում առօրյան ներխուժում է բանաստեղծական տարածություն, առավել ընդարձակվելու հնարավորություններ են ստեղծվում, կիրառվում է մտերմիկ և նույնիսկ առօրյա-խոսակցական բառապաշար: Թերևս դիպուկ է նկատել Հասմիկ Հակոբյանը, թե՝ «Սկսելով իրոնիկ ենթերանգով որևէ միտք կամ նախադասություն, որը ստանդարտ կառույցի կազմաքանդում է հետապնդում, հաջորդ քայլին, իրականության հետ շփվելով, թեման ինքնալրջանում է»[1]: Նման պոեզիան կոշտ ու անկողմնակալ է, հաճախ սահմանում է արտաքին պատկերների անզուսպ շարադրություն: Բառային հյուսվածքները հագեցած են, կիրառվում են իրերի թվարկումներ՝ անոգեղեն ու պրոզայիկ իմաստաբանական-հումորեսկային ընդգրկումներով.

Համբերությունդ էնքան ծով է,
որ էս տարի էլ ծով չգնացինք
(Կաբուլէ՜ծի՝ գնացողների հնչողությամբ),
լող տվինք քո ծով համբերության
կանաչ-թափանցիկ ջրերում,
խաղեր տվինք մեդուզաների հետ,
օրը երեք անգամ խոսեցինք դելֆիններից,
մաշկի տակ ու վրա առանք
բանականության հեռու եղբայրների արևագրերը,
հում խորոված կերանք
Coca-cola տենտի ծռված շուքին,
երկուսի կիսեցինք ջրերը,
որ Աստծո ժողովուրդն անցնի Թուրքիա (էջ 10)

Այսպիսի բանաստեղծությունը անընդհատ հիշեցնում է ընթերցողի ներկայության մասին, զուսպ ընթերցողի համար՝ զսպված ենթիմաստ է տեսանելի, անհեթեթության հոգեվիճակը՝ անհեթեթության մասն է լրացնում, և ի վերջո, ընթերցողի մասնակցությամբ է տեղի ունենում բանաստեղծության շրջանակի արագ և անսպասելի փակումը: Ուստի սոյն գրքի բոլոր բանաստեղծություններն անավարտ են, ինչը գիտակցել է նաև հեղինակը և հրաժարվել վերջակետերից: Բանաստեղծությունների վերջում դրված բազմակետերը ոչ միայն շարունակականությունն են ենթադրում, այլև դրա անխուսափելիությունը:

1 https://granish.org/flood/

Ժամանակակից պոեզիայի համապատկերում Ներսես Աթաբեկյանն այն քչերից է, որ կարողանում է այսպես կոչված ավանդապաշտությունն ու ավանգարդը այնպես ներհյուսել, որ արհեստական չլինի: Այս անցումները հիմնականում պայմանավորված են որոշ գաղափարական տաբուների կազմաքանդման և ինտելեկտուալ-մշակութային արդեն իսկ կայացած երևույթների՝ ուղղակիորեն հղումներով: Իր «Պարտությունն անխուսափելի է, խաղը՝ շարունակական» հոդվածում Հասմիկ Հակոբյանը տալիս է հետևյալ բնորոշումը. «Աթաբեկյանի պոեզիայում հաճախ կարելի է հանդիպել միտումնավոր հանգավորված բանաստեղծությունների, որոնք առաջին հայացքից տարրական հանգախաղի նմուշներ կարելի է համարել, սակայն առավել ուշադիր ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ, դիմելով նմանատիպ հանգավորման, նաև ասոնանսային, դիսոնանսային երևույթների կիրառման, բանաստեղծը նպատակ ունի խաղի վերածել ասելիքը, իսկ խաղարկայնությունը ժամանակակից պոեզիայի ամենաբնորոշ առանձնատարրերից մեկն է»[1]: Համաձայնելով գրականագետի հետ, հավելեմ, որ այսքանով չի սահմանափակվում աթաբեկյանական ստեղծաբանական լաբորատորիան. բանաստեղծն ստեղծում է նաև տեսողական պոեզիայի, նամակագրական-մտերմական երկխոսության, ասոցիատիվ ազդեցական բանաստեղծության, մոզայիկայի ու փազլային պատկերաշարի և այլ նոր ձևեր: Մինչդեռ, նշված ձևերը նոր ու արդիական են ոչ միայն հայ, այլև համաշխարհային պոեզիայում:

Բանաստեղծի համար բառը դառնում է որոնման և գտնելու գաղտնի կոդ, պարունակում է բազմաթիվ իմաստներ՝ ներդաշնակ յուրաքանչյուր ընթերցողի ճաշակին ու պատրաստվածության մակարդակին, և այս ամենը կառուցվում է ներքին գրաֆիկական չափածոյի ձևով: Գրաֆիկական, քանզի Աթաբեկյանի պոեզիայում տողը հստակորեն մտածված, հաճախ նաև ինքնուրույն ու անկախ միավոր է:

Ժամանակակից գրականության մեջ ազատ չափածոյի ընկալումը տարաբնույթ երևումներ ունի: Իմ կարծիքով, բանաստեղծների մի զգալի մասը (հատկապես երիտասարդները) ավելի հաճախ ապավինում է կարճ արձակին, ուստի հաճախ ստեղծագործության կոտրված տողագիծը պարզ չէ, պայմանական է, իմաստային շեշտ

1 Նույն տեղում:

չի կրում: Իսկ սեղմված ազատ չափածոն տրվում է հազվագյուտ բանաստեղծների:

Գրական ընթացքի ստեղծարարության համար շատ կարևոր է ցիկլային մտածողությունը: Այս իմաստով ևս «Երկրապտույտ» գիրքը ուշագրավ է: Բանաստեղծական բաժիններն ունեն ներքին զարգացում և դրանցում ընդգրկված բանաստեղծությունները արձագանքում են մեկը մյուսին: Իսկ բաժինների հաջորդականությունը ամփոփում է գիրքը՝ ստեղծելով կրկնակի զարգացում: Կերտվում են պատմություններ, չնայած կոտրված են կարճ տողագծերի: «Անպատասխան» բաժինը քաղաքացու՝ կյանքի և իրականության ընկալումն է՝ հավատի ու Տիրոջ հետ յուրահատուկ հարաբերությունը, հայրենիքի նորօրյա ընկալման և դարձյալ ճանաչման ջանքն ու մասնակցությունը պետականության կերտման ազգային ձգտմանը:

Սա այն տունն է, որ շինել է վարպետ Օհանը,
բայց դու չես ապրում այս տանը,
որ շինել է վարպետ Օհանը,
ու չես ապրում այնտեղ,
ուր ծփում է Սևանը,
ու չես ապրում այնտեղ,
ուր հայի-թուրքի սահմանը
գծել ու պահում է վարպետ Իվանը,
նույնիսկ այնտեղ,
ուր ծաղկում է յասամանը
ու իր հոտից էլ շուտ անհետանում,
ոչ էլ Երեբունի դարձող Երևանում
կամ էլ Հոգևոր Հայաստանում,
ինչպես խոստացավ Տերյանը (էջ 26)

Մի առանձնահատուկ հմայք ունի «Մի գիշերվա Շուշի» բանաստեղծությունը: Սա ոչ միայն ծննդավայրին ձոնված ասքապատում է, այլև բանաստեղծի հուշ-հարաբերումը իր մանկության հետ: Կերպավորվում է քաղաքը, դառնում գեղեցկուհի, որն այնքան մոտ ու հարազատ է, ինչպես սրտի բաբախը:

Մի գիշերվա՜ Շուշի,
ընդմիշտ հիսունամյա

պապիս կարոտներով քեզ ուզեցի սիրեմ,-
էն ի՞նչ սիրուն էիր՝
փրփրաժանյակ,
բարակիրան,
ճախրող մատներով նեղ,
էն ի՞նչ սրտապատառ
սպասված ու չեկած՝
իմ՝ ուրիշի բաժին առաջին սեր,
իմ առաջին աստղի անկման պես կարճ (էջ 18)

Բանաստեղծություններ է դառնում ապրիլյան քառօրյան, որը բանաստեղծի տագնապն ու ցասումն է ընդդեմ մահվան, արյան ու պատերազմի: Ինչպես Ավ. Իսահակյանն իր «Ահա նորեն գարուն եկավ» բանաստեղծության մեջ մերժում է գարնան խորհուրդն իբրև ծաղկման ու նոր կյանքի ծես, այնպես էլ Ներսես Աթաբեկյանն է ծառս լինում կյանքի բնականոնությանը, քանզի մահվան ներկայությունը անմիջական է, ու տոնը հետաձգվում է.

Գարունը չի գալիս:
Կռիվ է, ասում է, չեմ գալու էս գարուն,
ձեր կողմերում արյունն էժանացավ,
ամեն ինչ կարմիր են նկարում՝
դաշտը, բլուրը, ծառը,
փորած ակնաբիբը,
նշանառու չարությամբ
կկոցված արևն ու մահվան
ճամփեզրին քնած զինվորներին (էջ 33)

«Անպատասխան» շարքում հայրենիքի հետ բանաստեղծի հարաբերումը տեղի է ունենում Արարչի անմիջական մասնակցությամբ: Գրողն օգտագործում է բանատողի ասոցիատիվ ընկալման կերպը: Արարիչն ու Հայրենիքը մեկ զուգահեռի վրա են, ուստի բանաստեղծի համար մեկը մյուսով է գոյավորվում:

Բաց են բոլոր դռները,
դուռ բացողն է պակասել,
ցած են բոլոր լեռները,

բարձրացողն է պակասել,
մտի google, մտքինդ
կուզես Աստծուն հարցրու՝
անպատասխան հարց չկա.
հասկացո՛ղն է պակասել (էջ 19):

Երևույթի նոր ընկալումը և պատկերումը աթաբեկյանական բանաստեղծության մեջ համակարգային է: Բանաստեղծը չափազանց մտերիմ է թե՛ Աստծու հետ և թե՛ հայրենիքի, քանզի երկուսն էլ իր կենսագրության մեջ են: Բանաստեղծի «երկրապտույտ»-ը՝ դառնում է հոգևոր կյանքի սահմանների յուրովի ընդլայնում:

Կենսա-գրականությունը թերևս առավել ինտիմ է դառնում գրքի հաջորդ՝ «Սիրամարտ» բաժնում: Դարձյալ ցիկլային անցումներով քարտեզագրվում է ոչ միայն ապրումը, այլև ապրումի ներկայությունը կյանքի յուրաքանչյուր իրադրության մեջ, երբ չափազանց կարևոր է դառնում նաև իրականության պարտադրանքը.

Էս գարուն անուն չունեցար, սե՛ր իմ,
հասցե չունեցար,
ձեր թաղի տղերքը
չունեցան տղության ասպարեզ,
քաղաքապետը ծառերը կանաչ էր նկարել,
ծաղիկները՝ բացվող,
մայթերն՝ աղջկաշատ,
բայց կյանքը հերվա ճնճղապաշար էր,
անուն չունեցար, սե՛ր իմ,
նույնիսկ ընտրողների գերճշգրտված ցանկում,
հասցե չունեցար (էջ 46)

Բանաստեղծի սիրային «երկրապտույտ»-ը վերածվում է մերօրյա սիրահար տրուբադուրի թափառումների, որտեղ երևում է կյանքի ընթացը, պատկերվում է փողոցը, թաղամասը (Մալաթիա), իրական ու գրական սերերը: Այս թափառումներում մարդը դառնում է հավերժական ասպետը՝ Դոն Կիխոտը, և Սիրամարտ, քանզի աթաբեկյանական սերը նույն մենամարտն է՝ ընդդեմ հողմաղացների.

Տիկին, ձերդ գեղեցկություն,
հմայախոսքով պարագծված տեղանքն
այլերեն է պատմում ժամանակն ու տարածությունը -
դուք միշտ ձեր ներսում եք,
ես՝ չէ,
ներսուդուրս եմ անում՝
նայած ինչ եղանակ են կամենում
մետեո-տիկնայք գրբաց ու անբասիր,
թերևս այսքանը իմ մասին,
իսկ ձե՞ր -
որ եղե՞լ եք - ոչ իմը,
որ միասին չե՞նք վերադարձել ոչմիտեղից
ու չե՞նք վառել լույսը,
որ հանգցնենք,
չե՞նք հագնվել, որ հանելիք ունենանք,
չե՞նք պրկվել շնչահատ,
մինչև լուսինը
սավանների վրա նկարեր
մոտավոր քարտեզը գիշերվա,
ուր երկու մարմին շարունակ
գտնում ու կորցնում են իրար -
ժխտականն ինչո՞ւ այսքան նախածանց եղավ,
և տեղանքն - անմուտք,
և կյանքը - անհնար... (էջ 55)

Սիրո պատկերումը բանաստեղծը կատարում է դետալային կառուցումների ձևով, որից առթում են հայ և համաշխարհային գրականության ռեմինսցենցիոն հղումները, ուստի ստեղծվում է խճանկարային պոեզիա: Կարելի է հանդիպել Իսահակյանի («ու հեռվից գեղեցիկ էր Ռիալտոյի կամուրջը»), Տերյանի («աշուն ու անձրև նմանակելով») և Չարենցի («առաջին ու վերջին քույր», «Նայադների պատկերով ու նմանությամբ») կին կերպարներին, Աննա Կարենինային, Դուլսինեային, անգամ քուչակյան լույս ու ջուր հոգին: Սիրո կորուստն ու հումորը ներդաշնակվում են Աթաբեկյանի պոեզիայում: Սիրո տառապանքին գալիս է փոխարինելու հումորային հետահայացը, քանզի աթաբեկյանական սիրո պատմությունը՝ անցած ու կորսված սերն է: Սա նաև բանաստեղծի կողմից հատուկ

է արվում, որպեսզի ծիծաղի արցունքների մեջ թաքցվի կորստի ու ցավի արցունքները:

Գրքի երրորդ՝ «Օգոստոսի անձրև» բաժինը ժամանակակից կյանքի քարտեզագրումն է: Գրքի այս հատվածում պարադոքսների կառուցումներով ի հայտ են գալիս գրողի պոետական դավանանքը, ես-ի ու կյանքի հարաբերումը, կենսագրական փաստը, ինտելեկտուալ հղումները, որոնց բանաստեղծը նախորդ գրքում տվել է եզրույթի արժեք ունեցող ձևակերպում՝ տարընթերցումներ:

Մի գիշեր հոգնեցի ինձնից,
չափածոյից չափավոր ձանձրացած՝
փետրագրիչս կցեցի իր երամին,
ինձ հանձնեցի արխիվ
ու խմեցի՜
եղած ու ածանցյալ՝
մի լրիվ թանաքաման (էջ 81)

Սա աբստրահում չէ, այլ կոլաժային նոր մտածողությամբ փաստագրում, որը ներառում է թե՛ սիմվոլիզմի տարրեր, թե՛ կուբիստական կառուցման հնարանքներ, թե՛ գերիրապաշտական վիզուալ-պատկերային խճողումներ և թե՛ մոգական ռեալիզմի՝ արդի առասպելաբանությունը:

Ի վերջո, այս բաժնում բանաստեղծի «երկրապտույտ»-ը դառնում է կյանքի ճանաչողությունը, որն ընդմիջարկվում է համաշխարհային մշակութային քարտեզի՝ հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք խաչաձևումներով, և հասնում ընդհուպ այն կետին, որտեղից Երկնավորը հետևում է պտտվող Երկրին:

Բանաստեղծության կաղապարված կարծրացած կառույցներն, անշուշտ նորոգման կարիք ունեն, նոր ժամանակի ռիթմերին համահունչ ընկալումն ամենքին չէ, որ տրված է: Փորձարկումներ՝ ինչքան ասես, «քանդումին հեշտանքը»՝ ամեն օր, սակայն բանաստեղծության նոր մոդելի «կառուցման տաժանքը» ամեն ոք չէ, որ վերցնում է իր ուսերին: Ներսես Աթաբեկյանի բնագիր-կառուցումը հանգամանալի է և վարպետորեն է իրականացվում: Բնագրի ստեղծման ճանապարհին զանց են առնվում բանաստեղծական մի շարք կանոններ և օրինաչափություններ: Այնուհանդերձ, բանաստեղծությունն ըստ Ներսես Աթաբեկյանի, դառնում է մոզայիկա կամ փազլ, որը ոչ

միայն գրողն է կառուցում, այլև իր կառուցման խաղին մասնակից է դարձնում ընթերցողին: Աթաբեկյանի ընթերցողը որքան պատրաստված լինի, այնքան ազդեցիկ է դառնում բանաստեղծության հավաքման թողած ամբողջականության տպավորությունը:

Արմեն Ավանեսյան - Բ.գ.թ. ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նորագույն գրականության բաժնի ավագ գիտաշխատող: Նախասիրություններն են Նորագույն շրջանի և հատկապես ժամանակակից գրականության հիմնահարցերը:

АРМЕН АВАНЕСЯН - *«ЗЕМЛИВОРОТ» НЕРСЕСА АТАБЕКЯНА* - Поэтическое присутствие Нерсеса Атабекяна важно и ощутимо в армянской литературе XXI века. Коллекция Нерсеса Атабекяна “Земливорот” предоставляет читателю новую и свежую поэзию, важнейшей особенностью которой является то, что автор использует классические метрики и слогово-тонические конструкции, которые параллельны инновационным и экспериментальным современным структурам.

Жизнь изменилась, поэзия изменила свои закономерности, она стала созвучна жизни. Поэт как зеркало отражает то, что вокруг него. Это типично для британских документалистов, но зеркальное отображение жизни не всегда является точным повторением отражения. Нерсесу Атабекяну удается создать мир кривых зеркал с уникальным внешним видом, а реальность отражается в прямой отношении и позиции поэта. Это приводит к конденсации, в результате которой повседневная жизнь вторгается в поэтическое пространство, создается больше возможностей для расширения, используется интимный и даже повседневный словарный запас.

У поэта есть новое коллажное мышление, которое включает в себя элементы символизма, возможности кубизма, сюрреалистическая визуально-изобразительные тонкости и современную мифологию магического реализма.

Оригинальная конструкция Нерсеса Атабекяна детально проработана и искусно выполнена. В процессе создания оригинала ряд поэтических правил и схем игнорируются. Однако, по словам Нерсеса Атабекяна, поэма превращается в мозаику или головоломку, которая не только строит писатель, но и заставляет читателя участвовать в его строительной игре. Чем более подготовлен читатель Атабекяна, тем более влиятельным становится впечатление о полноте сборника стихов.

Ключевые слова: поэзия, система, модерн, образ, гражданин, мозаика, реминисценция, постмодернизм.

ARMEN AVANESYAN - *NERSES ATABEKYAN "ROTATION OF THE EARTH"* - Nerses Atabekyan's poetical presence in Armenian literature of the 21st century is significant and tangible. Nerses Atabekyan's "Rotation of the Earth" collection provides the reader with new and fresh poetry, the most important feature of which is that the author emphasizes the classical dimension and the syllabic-tonic constructions, which parallel the innovative and experimental modern structures.

Life has changed, poetry has changed its patterns, it has become in tune with life. The poet reflects like a mirror what is around him. This is typical of British documentaries, but the mirror image of life is not always the exact repetition of reflection. Nerses Atabekyan is able to create a world of crooked mirrors with a unique look, and the reality is depicted by the poet's direct attitude and position. This leads to condensation, as a result of which everyday life invades the poetic space, there are more opportunities to expand, intimate and even everyday conversational vocabulary is used.

The poet has a new collage thinking, which includes elements of symbolism, ideas of cubist constructions, surrealistic visual-pictorial intricacies, and modern mythology of magical realism.

Nerses Atabekyan's original construction is detailed and skillfully carried out. A number of poetic rules and patterns are ignored on the way to the creation of the original. However, according to Nerses Atabekyan, the poem becomes a mosaic or a puzzle, which not only builds the writer, but also makes the reader participate in his construction game. The more prepared Atabekyan's reader is, the more impressive the impression of the completeness of the collection of poems becomes.

Keywords: poetry, system, modern, image, citizen, mosaic, reminiscence, postmodernism.